

ՇՏԵՄԵՐԸՆ

ՊԻՏԸՆԻ ԳԻՏԵԼԵԸՑ

ՀԵՏՈՐ 7:

ՅՈՒՆՎԵՐ 1. 1854:

ԹԻԻ 73:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՆԻԹՈՑ

Ծանուցում. Երեւ. 1: Երգ. Եր. 1: Մարդկային եղբայրութեան վրայ. Եր. 2: Քրիստոնէական քաջասրտութիւն. Եր. 4: Բազմածախ յիմարութիւն. Եր. 4: Հաւատքով մեռնելու պատրաստութիւն. Եր. 5: Արիակին սուրբ պահելուն ազդեցութիւնը՝ մարդու առողջութեանը վրայ. Եր. 5: Անանց ազդեցութիւնը. Եր. 6: Մահաբեր սխալանք, կամ Գիշերային նաւաբեկութիւն. Եր. 7: Եղծքին ուժը. Եր. 9: Յարողութեան վտանգը. Եր. 9: Եռատանն եկեղեցի մը. Եր. 10: Ղջմարտութեան հակառակորդներուն վրայով խորհրդածութիւններ. Եր. 11: Մեկզմէկու օգնեցէք. Եր. 12: Եւ անկէ ետեւ ինչ. Եր. 12: Երողութեան կանոններ. Եր. 13: Մտքի խռովութիւն. Եր. 13: Հայելիի մը պատահածները. Եր. 14: Սեծ մայրաքաղաք. Եր. 14: Օրագրաց վրայ տեղեկութիւններ. Եր. 15: Պատրաստ պատասխան մը. Եր. 16: Յանկ նորատիպ գրոց. Եր. 16:

ԾԵՆՈՒՅՈՒՄ

Ներկայ ծանուցումովս կ'իմացնենք ՇՏԵՄԵՐԸՆԻ նախկին յարգի ստորագրողներուն, և ընթերցողներուն, և հասարակութեան ընդհանրապէս, որ աս պարբերական տետրակին հրատարակութիւնը բաւական երկար ժամանակ ընդմիջելէն ետեւ՝ հիմա նորէն կ'սկսի, ու կանոնաւոր կերպով պիտի շարունակուի: Եսիկա չէ թէ ձեռնառուութիւն չգտնելուն, կամ օգտակար ըլլալուն կողմանէ տարակոյս մը ըլլուելուն պատճառաւ ընդմիջեցաւ՝ այլ հրատարակչին բացակայութեանը, և ուրիշ ստիպողական բաներու պատճառաւ՝ որոնց աս տեղ յիշուիլը աւելորդ է: Ուստի՝ աս հրատարակութեան նորէն ձեռք զարնելու ատեննիս, բոլորովին վստահ ենք որ՝ ուսման զարգացմանը, և զանազան դէպքերէն եղած յառաջագիմութեանը պատճառաւ, առաջի ատեններէն աւելի ընդունելի պիտի ըլլայ աս գործը. և մեր կողմանէ ալ ամենեւին աշխատութիւն չպիտի խնայուի, զանիկայ աւելի արդիւնաւոր և օգտակար ընելու:

ԵՐԳ

ԱՅՆՆ Է՝ ԿԱՐՃ, ՄԱՐԴՆ ԱՆՑԱՒՈՐ

Երկիրպագեմք քեզ Տէր Ետուած՝
 Խոստովանեալ խնայք սրտանց,
 Թե՛ մեզ նման հողեղինաց՝
 Անանքն է տրկար ու խիտ վաղանց:

Տարւոյն հետ շուտ շքան կ'ընենք,
 Եւ կը տանի իր հետ մեր կեանք.
 Ինչ որ ըլլանք՝ ինչ որ ընենք,
 Գեպ' ի մահը մենք միշտ կ'երթանք:

Ո՛վ Տէր՝ ինչ նուրբ է ան դերձան,
 Որմէ մարդկան վիճակն անանց՝
 Ասխեալ են միշտ ու կ'երերան,
 Կենաց թելին վերայ վաղանց:

Մեզ կը սպասեն ամեն վայրկեան՝
 Ենթերջ ցնծում տալ և կամ վիրո,
 Իայց մենք անհոգ՝ եղբքն մահուան՝
 Ինչ անդոյշ կը դիմենք միշտ:

Տէր մեզ զարթո՛ մահուան քունէն՝
 Մենէ՞ վերջու թմրութիւննիս,
 Որ երբ ելենք մենք աս կեանքէն՝
 Ինու քովը գրուննք հողիներնիս:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆ
ՎՐԱՅ

Աստուած՝ բոլոր մարդկային ազգերը մէկ արիւնէ մը ըրաւ, երկրիս երեսը բնակելու համար. անոնց ամէնը մէկ ընտանիք մը կը կազմէն, որուն գանազան անդամները հաւասար պահանջմունք ունին համակրութեան և մարդասիրութեան՝ որոնք Երարեչը մարդոց սրտին մէջ դրած է :

Նոյն կատարեալ կառավարութեանը ենթական են, իր օրէնքներուն անթիւրելի հնազանդութեանը հաւասար պարտաւորութեանն ու վերջին դատաստանին մի և նոյն ատեանին պատասխանատուութեանը ներքէն ըլլալով :

Մտնոց բաժինը հասարակաց է. տկարութիւններին, վտանգներին, յոյսերին ի դերեկըին ու ցաւերին, որոնք անկատարութեանն ու մեղաց վեճակի մէջ ըլլալուն կը պատահին և միայն գերեզմանին մէջ վախճան կ'ունենան : Բայց խաւարը քիչ շատ ամէն մտքի վրայ կը տիրէ, և իրենց տգիտութիւնն ամէնալ կը խոստովանին : Միայնունքին շառաւիղները բոլոր սրտերուն մէջ արմատացած են, և կ'ընդարձակին, ու ճիւղեր կ'արձակեն, և պրտուղ կը հասցընեն, քանի որ Աստուծոյ՝ Յիսուս Քրիստոսով տուած շնորհքը չխափանէ անոնք : Ուստի փոխադարձ ատելութիւններ ու կռիւներ կը ծագին խռովութիւն հանելով մեծամեծ ժողովուրդոց մէջ, ու անհամար նեղութիւններ պատճառելով մասնաւոր անձանց. ասկէ են ամէն դարու մէջ աշխարհս անպատ դարձընող պատերազմներն ու կռիւները՝ կայսնէն ու Երեմէն մինչև հիմա. ասկէ են նաև մահառիթ փստերը՝ որ մարդկային յոյսերուն և զուարճութիւններուն հետ, ամէն ատեն խաղու պէս կը խաղան : Մարդոց ցանկութիւնները այնչափ սաստիկ կ'աճին թոյլտուութիւն եղած ատենը, և ազգակործան գէշութիւններուն ու թշուառութիւններուն բոլոր սերունդը ծնունդ կ'առնեն անոնցմէ, և այրիներուն ու որբերուն արցունքը կը բազմապատկեն : Եսիկա երկնից բացարձակ մէկ վճիռը չէ՝ որ մարդկային կենաց դառնութիւն տուող շարիքները աշխարհի վրայ հեղեղի պէս

թափէ. բայց մարդոց սրտին ընտրածն է՝ որ հաճոյքներուն ու կիբքներուն ձայնին կը հակամիտին, ու երկնից հաստատուն օրէնքին անհնազանդ ըլլալու զեղեռութեամբ կ'ուրախանան՝ Աստուծոյ առջևը ամէն բանէն պատուական ու հաճելի եղածներն ու գերազանցեալ մարդկութեան հաւանածները վտանգի դրնելով : Նշմարիտ է որ անմահ ըլլալու համար ստեղծուած էակին ազնուութեանը անվայել է, ու երկնից համար իր հոգին չհրահանգել, և ինքզինքը յուսահատութեան աշխարհին դատապարտել ցոյց տալ է. բայց աս բանին առ հասարակ ասանկ ըլլալուն մէկը չկրնար ընդդիմութիւն հանել, երբոր անցած ատեններուն պատմութիւնները աչքէ անցրնէ՝ կամ անցեալ դարերուն այլանդակ հակամիտութիւնները նկատէ : Խաղաղութիւնն ու սերը՝ միայն անկատար կերպով մը աշխարհս կրճական մասին հանգամանքը ցոյց կուտան. յիշաւի՝ անունով Քրիստոսի հետեղներուն մէջ տիրած կարծեաց ու զգայմանց տարբերութիւնները շատ ընդարձակ ու բազմաթիւ են, և եկեղեցւոյն օգուտներուն ու բոլոր մարդկային ազգին ալ վնասակար են առ հասարակ. վասն զի անոնք այնչափ անվայել կերպով կը ներկայացընեն Մտնոց հոգին՝ որ իր կեանքը աշխարհի փրկանք ըլլալու համար տուաւ. ու Ամենաբարձրիւրոյն յայտնեալ կամացը ընդդիմութիւն կ'ընեն, որ իր Որդւոյն «հեթանոսները ժառանգութիւն պիտի տայ, ու մինչև երկրի ծայրերը անոր ստացուածք» : Սաղմ. ք. 8 :

Եւ մինչև անգամ Քրիստոսի ճշմարիտ աշակերտներուն մէջտեղը տիրած տարբերութիւնները այնչափ շատ և ընդարձակ են՝ որ դիտութեան և առաքինութեան մէջ շուտով իրենց յառաջ երթալուն, և համբարձման ատենը փրկչին տուած պատուէրները կատարելու գերազանց յաջողութիւնը գտնելուն չեն յարմարիր : Մտնոց յոյսերը կը նուազի, հասնողութիւննին կը պակսի, աշխուժութիւննին կը քիչնայ, օգտակարութիւննին կը նուազի, ու ապառնի վարձքերնին կը վնասուի՝ իրենց փոխադարձ սիրոյն և գործակցութեանը պակսելուն համար : Բայց ասոնք աշխարհը խիստ սաստիկ կը տանջուի : Հազիւ կը դանտուի անակ ժամանակ մը՝ որ բոլոր աշխարհս շատ

նշանաւոր կերպով անոր ցնցումը չզգայ : Ազգազգի վրայ կ'իլէ : ու թագաւորութիւն թագաւորութեան վրայ • զէնքեր կ'առնուին : պատերազմներ կը մղին : արիւնը լայն գետերու պէս կը վաղէ : ստացուածքը կը վատնի : Հրն ձերու արտերը ոտից կոխան կ'ըլլան : գեղեր կ'այրին : քաղաքներ կը կործանին և կը կողոպտուին : ու աւերմունքը հեռուն և ընդարձակ կը տարածի՝ ամէն ալիքներու վրայ թշուառութիւն և տառապանք տանելով : միօրինակ յաղթեալին ու յաղթողին բնակութիւնները կը թափէ անոնք՝ առանց սահմանի : Եւ մինչև անգամ՝ ուր որ այս գեղական ոգիին արդիւնքները քիչ ահարկու կ'երևան : Հոն ալ անոնք կը տեսնուին : ու ողբալի են : Ասոնք կողմնակցութեանց բուռն կիրքերուն մէջն ալ կը տեսնուին : Օրէնսդրաց ատեանը : և Ետեանակալաց խորհրդարանը : լրագիրներու հրատարակիչներուն զայրագին յուզմունքներուն : ու հասարակութեան քննարկարար ատենախօսներուն մէջ • ստորին կարգի մարդոց սաստիկ հակաճառութիւններուն : և քաղաքական պաշտօնէից մէջ • բնաւ երբէք մեծ կամ փոքր ժողովուրդի մը ստոյգ և կամ ենթադրեալ օգտին վերաբերեալ անանկ խնդիր չ'ըլլէր՝ որ մէկ մէկու դէմ մաքառող կարծիքները չարթնցնէ : ու ամէն սիրտ դիմամարտութեան կիրքով չբորբոքէ : ու գրեթէ ամէն լեզու իր սրտին յուզմանցը սաստիկ եռանդուն արտայայտութիւններովը չչարժէ :

Հիմա ուր է մարդոց Եղջօք պէս զգացում ունենալին ցուցնելու ասպոցոյցը : Ուր է ան հայրութեան նշանները : որուն բոլոր մարդոց հօրմէն՝ Աստուծոյ հաստատուած ըլլալը : ամէն ալ ճանաչելու պարտաւոր են : Բնական ազդումը՝ յիրաւի կրնայ ստիպել սաստիկ ու զայրացեալ կիրքերը կախ թողելու : դիպուածով ու մարդկութեան քանի մը ստորին պարտքերը կատարելու • բայց աս պարտաւորութիւնները կատարելու առաջնորդողը բնական ազդումն է միայն՝ ու չէ թէ գերազանց բարոյական սկզբունքը • և արդիւնքն ալ անժխտելի է որ՝ եղբայրութեան հաճելի առնչութիւնները գործնականաբար ընդունուած չէ : մեղքին յաղթութիւն գտած չափին համեմատութեամբը : Ոչ ալ՝ Աւետարանին միջոցովը : Աստուծոյ աթոռէն ըլսած ազդե-

ցութիւնէն զատ ուրիշ բան մը կայ՝ որ պինտ բռնէ իր սրբազան կապակցութիւններուն սերտ ճանաչումը : անոնց հետ պարունակուած սրբազան պարտաւորութիւններովը մէկ տեղ : «Աղատութեան : Հաւասարութեան : և Աղբայրութեան» աղաղակները՝ որ երբեմն կը լուռին կատարած բազմութիւններու բերնէն : բռնաւորներուն լուծը իրենց պարանոցէն վերցնելու փորձ փորձած ատենին՝ մարդկութեան զուտ ոգիին հօտը այնքան քիչ կը բուրնի : որչափ որ Յիսուսը խաչը հանդիմաններուն բերնէն կ'իւծէ «Միջ եղեր : Հրէից Թագաւոր» աղաղակը՝ երբոր ծիրանի հանդերձը հազուցին : և փուշէ պսակը գլուխը դրին : ու եղէգը ինձեռքը՝ ծաղը ընելով անոր առջևը ծնկան վրայ կու գային : Այնքան քիչ յարգութիւն ցոյց տուած է մեղքնեալ ռամիկը մէկ պարագային մէջ՝ Աստուծոյ սահմանուած մարդկային իրաւանցը : որքան որ միւսին մէջ՝ Անմեղ Չարչարուողին արդար իրաւանցը :

Սակէ տարբեր ու շատ հեռու է «Որդւոյն Աստուծոյ օրհնեալ Աւետարանին միջոցովը» մարդկային իրաւանց ցուցուած յարգութիւնը : Իրաւ որ «Աղատութիւն» կը քարոզէ քաւչական արեամբը՝ մեղաց ու Սատանային գերի եղողին • «Հաւասարութիւն» կը քարոզէ ամէն մարդու՝ իր Արարչին ունեցած պարտաւորութեանցը : իրաւանցը : արտօնութեանցը և հպատակութեանցը նկատմամբ • ու կը հաստատէ իրենց «Աղբայրութիւնը» իբրև որդիք հասարակաց հօր՝ Աստուծոյ : և իրենց հասարակաց մօր՝ երկրին : և իբրև ժառանգ հաճոյից և ցաւոց : ուրախութեան և տրամուլթեան : որ ամենուն հասարակ ժառանգութիւնն է : Ո՛վ սք որ կը հասկընայ «Ան խաչը կ'իւծ Քրիստոսի» վարդապետութիւնը՝ աս ալ կը հասկընայ : ու կը փախչի «Թշնամութենէ : կռիւէ : նախանձութենէ : բարկութենէ : հակառակութենէ : երկպառակութենէ : չար նայուածքէ : սպանութենէ : և ասոնց նման բաներէն» • որովհետև մարմնոյ դորձքերը՝ թէ Աստուծոյ առջև անարգ են : և թէ ընկերակցութեան օգուտներուն միասակար են միօրինակ • ու անոնց տեղը՝ կը մշակէ «Սէր : խնդութիւն : խաղաղութիւն : երկայնատեութիւն : քաղցրութիւն : բարութիւն և հաւատարմութիւն» • իբրև պը-

տուղ Հոգւոյն, սուրբ և ընդունելի Աստուծոյ՝ ու մարդոց մէջ ալ ընդհանուր բարի կամք մը զարգացնող : Եւ ճշմարիտը սա է որ՝ որչափ որ Աւետարանը երախտագէտ սրբտով ընդունուեցաւ իբրև Աստուծոյ շնորհաց յայտնութիւնը, ու որչափ որ անոր ուղին մասնաւորաց ամէն մէկուն՝ և ժողովոցոց ընդհանրութեան սրտին մէջ տարածուեցաւ, մարդոց բնաւորութեանն ու վիճակին վրայ զարմանալի լաւութիւն մը յառաջ բերաւ՝ ընտանեկան խաղաղութեան, և ընկերական կարգադրութեանց վերաբերութիւն ունեցածին չափ՝ հանգերձ մասնաւորաց իրաւունքը և ազատութիւնը ճանչնալով ու պաշտպանելով, ու կառավարութեան արդար և բարեխեր սկզբունքը հաստատուն բռնելով՝ անմեղին ապահովութիւնը կը պաշտպանէ, ու չարագործին արդար պատիժը կը հատուցանէ :

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ՔԱԶԱՍՐՏՈՒԹԻՒՆ

Անգղեյ մէջ նահանգը՝ հանքի մէջ բանող ազքատ մետաղահան մը, իր արուեստակից ընկերոջը հետ մէկ տեղ՝ խորունկ հորի պէս հանքի մը մէջ ական կը բանար : Աս աղօտ գործին ետևէն եղած ատեննին՝ մէկ ամուր ապառաժ մը նետելու վրայ էին : Ապառաժին մէջ ծակ մը բացին՝ ու վառօղը լեցուցին, ու բռնկցրնելիք պատրոյգը (Ֆիլի) անանկ մը գրին՝ որ ինքնին չէր կրնար հանուիլ : Իրենց գործողութեան բուն կանոնը ան էր որ՝ առաջ զմեղիով մը, բռնկցրնելիք պատրոյգին ծայրը կտրել պէտք էր . ետքը մէկերնին վեր կ'ելէր հորին մէջը կախուած զոյլով, ու միւսը կը սպասէր մինչև որ կրկին զոյլ վար իջնէր . և ան ատենը վարը մնացողը ասոր մէջ կը մտնէր, բռնկցրնելիքին կրակ կու տար, ու վերն եղողին նշան տալով՝ մինչև բռնկիլը, կրակ առնելը, ու նետուիլը, ինքն ալ վեր ելած կը գտնուէր : Բայց այս անգամին անզգուշութեամբ մը բռնկցրնելիք պատրոյգը քարով մը և ծայրը չարած երկաթ գործիքով մը կտրեցին, և կրակ սուս, ու պատրոյգը ֆաֆսալ սկսաւ . ուստի երկուքը մէկտեղ

զոյլն մէջ նետուեցան, ու նշան տուին որ վեր քաշէ : Վերը կեցող մարդը ու նայն տեղը կ'աշխատէր գործիքը շարժելու . մէկը վտանգէն ազատելը հնարաւոր էր, երկուքը մէկտեղ չէին կրնար ազատիլ . ու ժամանակ ալ անցնելը՝ երկուքին մահուանն ալ պատճառ պիտի ըլլար : Հանքագործին մէկը քիչ մը միւսին երեւոյր նայելով՝ զոյլն զուրս ցատկեց, ու ըսաւ . «Փախի՛ր, ես ըսպէէ մը երկինքը պիտի ըլլամ» : Գոյլը հորն 'ի վեր ելաւ շուտ մը՝ ու մէկը ազատեցաւ . և իր ազատութեանը պատճառ եղողին վախճանը ինչ ըլլալը զիտնալու սաստիկ փափաքով մը՝ հորին բերնին ծուեցաւ որ լսէ : Ղիշո ան ատենը նետուելուն շուտաչինը լսեց . հորն 'ի վեր մէկ քարի մը կտոր եկաւ ճակատին զարկաւ, ու անանկ նշան մը եղաւ որ՝ բոլոր իր կենացը մէջ չպիտի ելլէ մտքէն իր ազատութեան յիշատակը : Եւստ մը վար իջնելով՝ սկսան նետուած քարերը փորել, որ մարմինը մէկդի առնեն : Վերջապէս ձայն մը լսելով՝ զիտցան որ իրենց բարեկամը տակաւին կենդանի է : Անոր քովն հասան, ու գտան որ՝ քարերուն կտորուանքները իր վրան յարկի պէս ծածկեր էին, և իրեն քսաւ մը եղած չէր . ոչ ալ մինչև անգամ թեթև սկրզուածքի նշան մը կար վրան : Աս զիտուածին վրայօք իր ամէն զիտցածը աս էր որ՝ երբոր իր բարեկամը վեր ելաւ, ինքը նստաւ ու իր երեսին դէմ մէկ քարի մը կտոր բռնեց : Ու երբ իրեն հարցուցին՝ թէ ինչ պատճառով իր ընկերը ազատեր ու ինքզինքը ասանկ վտանգի մը մէջ ձգեր է, ինքը պատասխան տուաւ թէ՛ «Գիտէի որ իմ հողիս ասպահով էր, բայց անոր հոգւոյն ապահովութեանը վրայ այնչափ վստահ էի» :

Բողոքածոյն յիշարուիլին : Հաշիւ եղած է որ Չինացիք՝ իրենց կուռքերուն առջև վառելու խունկի համար 360 միլիօն Ռուբլո ծախք կ'ընեն : Աս հաշուով՝ բոլոր կայսերութեան մէջ ամէն հասակի ժողովուրդ մէկգլմէկու վրայ առնելով, մարդ գուրս մէկ Ռուբլո կ'իյնայ : Եւ այս կուսպաշտութեան մինակ մէկ բանին հաստատութեանը և պիտոյիցը համար եղած ծախքն է :

ՀԱՒԱՏՔՈՎ ՄԵՌՆԵԼՈՒ
ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Թէ որ հաւատքով մեռնելու երջանկու-
թիւնը կ'ուզես ունենալ, աս խրատը մտիկ ը-
րէ :

1. Չ'անք բրէ առջուց հաւատք ունենալ .
վասն զի մահը՝ հաւատքը գործածելու ատեն
է, չէ թէ նորէն ստանալու : Յիմար էին ան
կուսանքը՝ որ փեսային գալը մօտեցած ատենը
եղ ծախու առնելու կարօտ էին :

2. Սորվէ ամէն օր հաւատքի հրահանգնե-
րուն մէջ կեանք անցնելու, ու ալ աւելի Քրի-
ստոս իր բոլոր պաշտօններովը ընդունելու, ու
Աստուած անկա հաւատացեալներուն ինչ
վախճանի համար որ տուաւ, ան կերպովը եր-
մէն օգուտ քաղելու :

3. Յաճախակի երկինքի վրայով յստակ
գաղափարներ ունեցիր, ու զգոյշ եղիր որ մեղ-
քը զանոնք չաղտոտէ :

4. Յիշէ և դիտէ մտքիդ մէջ, Աստուծոյ
քեզի բրած մարդասէր գործքերուն վրայով քու
բրած փորձառութիւններդ, ու շուտ շուտ ա-
նոնց վրայ խորհրդածութիւն բրէ՝ որ անոնք
մահուան ժամուն քովդ պատրաստ ըլլան :

5. Շատ մը մտածէ՝ փորձութեանդ ժա-
մանակը քեզի եղած խոստմունքները՝ որ շատ
անուշ ու մխիթարական էին, ու աղաչէ որ
Տէրը անոնք քեզի յիշեցնէ մեռնելու ատենդ
ալ :

ԿԻՐԱԿՆ ՍՈՒՐ ՊԱՆԵԼՈՒՆ ԱՋԵՑՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐԴՈՒՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆԸ ՎՐԱՅ

1. Աստուածային պաշտամունքի ատենը
վայելուչ կերպարանքով երևնալու գաղափարը՝
որն որ բոլոր Արարիկն սուրբ պահօղ ժողը
վաւրդներուն մէջ տարածուած է, իրեն հետ
մեկտեղ կը տանի մաքրութեան ու շաղախութիւն
ընելը, և հագուստը փոխելն ու անձնական
տեսքին վայելչութեանը վրայ հոգ տանիլը՝
որ շաբթուան մէջ գործածած սովորութենէն
տարբեր մէկ կարևոր և առողջարար փոփոխու-
թիւն մին ալ է :

2. Արարիկ օրուան բերած ճարճոյ հան-
գրատութիւնը՝ ուրիշ մէկ խիստ կարևոր նիւթ

մին է : Շաբթուան մէջի անդադար և ձանձ-
րացուցիչ գործառնութիւններէն ետև՝ Քի-
զիքական գործարանքները կը յոգնին ու կ'իյ-
նան, և թէ որ Արարիկն վրայ գալով օգ-
նութեան հասնէր, բոլորովին կը նուաճէր ու
կը կործանէր : Արարիկ օրուան սթափիչ հան-
գրատութիւնը՝ կազմուածքը կը կազդուրէ, ու
առողջութիւնը կը պահպանէ :

3. Այն բանը կրնայ ըսուիլ ճշմարտա-
պէս՝ ճարճի համար ալ : Աս ալ շրջանաւոր
հանգիստ մը կը պահանջէ մարմնոյն պէս .
առանց ատր ինքն ալ կը նուաճի, ու մարմինն
ալ հետը մեկտեղ կը կործանի :

4. Մտաւոր տխրութիւնը և ընկճումը՝
ինչ բանէ պատճառած ըլլայ թող ըլլայ, զօ-
րաւոր կերպով մը առողջութեան կը դպչի . բայց
պատուական Արարիկին զուարթ կենդանու-
թիւն տուող և հոգևորող աղօթեցութիւնները՝
մաքին վրայի ամպերն ու մթութիւնը մաքրելու
հակամիտ կ'ընէ, ու ան առաձգական ոգին
կու տայ՝ որն որ առողջութեան այնքան շահա-
ւոր է :

5. Ընկերական կենաց մէջ եղած զա-
նազան մոլութիւնները՝ առողջութեան վրայ
շատ վնասակար պատերազմ կը յարուցանեն .
բայց պատուական Արարիկն՝ անոնց դէմ մեծ
ջանքով և աշխուժութեամբ կը ներգործէ իր
արդիւնքները, ու կրցածին չափ զանոնք կը
զսպէ՝ ու մարդիկ վնասակար կիրքերուն ախ-
տերէն, և ուժը սպառելու վտանգէն կը փրկէ :

6. Արարիկ օրուան արդիւնքին մէկն ալ
ան է որ՝ սրտին մաքրութիւն, և խղճմտանքին
խաղաղութիւն տալու աղօթեցութիւն ունի .
ու անոր համար ամէն մտքի հանդարտու-
թիւն ու հանգստութիւն և Աստուծոյ վը-
րայ անդորր վստահութիւն կու տայ, ու ան
ամէն սրտնեղութիւններէն ու գրգռութիւն-
ներէն կ'ազատէ մարդը՝ որոնք առողջութեան
այնքան վնաս կը հասցընեն :

7. Մէկը չկրնար տարակուսիլ, թէ մար-
դիկ այս աշխարհիս անցաւոր բաներուն ետևէն
բանականութեան հակառակ ունեցած սաս-
տիկ փափաքներնուն ծանրաբեռնալ ներգոր-
ծութեամբը՝ իրենց մարմնոյն և մտքին զօրու-
թիւնը խանդարելու, և վաղահաս տկարու-
թեան՝ հիւանդութեան ու մահուան ալ պատ-
ճառ եղան, բայց Արարիկին սուրբ ներգործու-

Թիւնը՝ մարդոց հետեւելու պատշաճ : եղած բաներուն ճիշտ նկատումը ընելու , փափաքը հանդարտեցընելու և չափաւորելու հակամիտութիւնը յառաջ կը բերէ . և այս կերպով մարդոց կազմուածքը ան ամէն ծանրաբեռնութիւններէն կ'ազատէ՝ որոնք այնքան վնասակար են իրենց :

8 . Առողջութեան կանոնները , և մարդիկ անոնց հնազանդելու պարտաւորութիւննին պայծառ կը տեսնուին , և շատ խորին զգացում կ'ունենան ան տեղերու մարդոց վրայ՝ ուր որ կիրակիին աղբեցութիւնը իրենց մըտքին տեսութիւնները կ'ընդարձակէ , որ աս ու հանդերձեալ կենաց մեծամեծ օգուտները աղէկ նկատեն :

Ուստի ան միակ կարևոր նպատակին նաշելով՝ որ մարդոյս առողջութիւնը պահպանելու կը վերաբերի , պէտք է որ Սուրբ Օրը կատարելապէս իր գործողութիւնը բաց , ու խիստ կարևոր հետեւութիւններ յառաջ բերած համարինք :

ԿԱՆԱՆՅ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Արեւիկայի երեւել արեւմտային Տրասպոսի խոստ. մէջ հասնին միջին , հիպոթալը կը քաղենք :

Աստուծմէ ետքը՝ իմ նախկին կրթութիւնս , այո՛ ինչ որ եղայ ու ինչ ալ որ եմ , բոլորը պարտաւոր եմ բարեպաշտ մօրս կրթութեանը : Իր խրատական ձայնէ եր , որ սորվեցուց իմ մատաղ հասակիս մէջ՝ որ սիրտս իմանայ թէ ի՛նչ վտանգ կայ զինովցընող զաւթին մէջ , և թէ՛ ապահովութիւնը անկէ հրաժարելուն մէջն է :

Եւ որովհետեւ մէկը՝ ինձմէ աւելի պարտաւոր չէ՛ այս մայրական բարերար աղբեցութեանը մասին , ասանկ ալ մէկը՝ ինձմէ աւելի ջերմար զգալ , թէ ուրիշներուն ապագայ վիճակին վրայ որչափ ներգործութիւն ունի :

Շատ աղէկ զիտեմ՝ որ Արամին օրինակ զանցութիւնը կնկանը ձեռքովս եղաւ . ու Յիսուս Քրիստոսի միջոցով , ազատութիւնն ալ կնկան ձեռք : Կնիկ էր որ Իսրայէլն ազատարարին՝ Մովսէսի միտքը տողորեց :

ու անոր բնաւորութիւնները ձեւացուց : Կնիկ էր որ երգեցողաց պարին զլուխ եղած՝ պատասխան կու տար այն յաղթական հանդէսին , որ նուազարաններով յառաջ կ'երթային տօն կատարելու կարմիր Օւովուն եզերքը՝ Փարաւօնին կործանմանը վրայ : Կնիկ մըն էր որ Արարան փախուց , ու Դեբօրային և Աբինօամին տղուն Բարակին երգը շարագրեց , ու Իսրայէլն ցեղերուն տարիներով արդարութեամբ դատաւորութիւն ըրաւ : Կնիկ մըն էր որ Համանին չար խորհուրդները ջնջեց , արգար Մուրթզէն փրկեց , ու ամբողջ ժողովուրդ մը ընդհանուր կործանումէն ազատեց :

Հիմա չքսենք Բարեւոյնի Համերամին՝ Ռուտիայի կատարինէին՝ կամ Անգղիայի ան թագաւորութիւնը վրայ՝ որոնց ուրախալից թագաւորութիւնը Քրիտանիայի պատմութեանը պայծառ ժամանակները կը կազմէ , և կամ այն զեռափթիթ աղնիւ թագուհոյն վրայ՝ որ ուսման և բարոյականի պաշտպանն է , և որն որ հիմա այն ծովապատ կղզոյն աթոռը կը բազմի . ասոնց վրայ չքսելով , կան նաև ուրիշներ ալ՝ որ աւելի սուրբ վարքի մը տէր են , որոնց վրայ մինչև անգամ անվայել պիտի ըլլար հիմա խօսելը :

Թագաւորական զաւազան մը չէ՛ կնոջ ձեռքը ամենէն աւելի յարմար եղած բանը . ո՛չ ալ կոտորածի դաշտն է իր փառաց տեղը : Իր ընտանիքն է իր գործելու թատրոնը , զեղեցկութեան խարխիսն ու իր զօրութեանը աթոռը : Կամ թէ որ դուրսն ալ տեսնուի , սիրոյ և ողորմութեան վերաբերեալ գործքերու մէջ :

Դեթեմանի՛ մահուան ցաւերուն ատենը քնացողը կնիկ չէր . կայիտափային պալատը Տէրը ուրացողն ալ կնիկ չէր : Գողգոթայ լեռանը վրայ խաչը հեռուն թողողներն ալ կնիկ չէին : Բայց կնիկ էր որ համարձակեցաւ անոր մարմինը պատուել , խունկեր պատրաստել , և մարմինը զմօտել . ու զիշերը իր գերեզմանին քով ամենէն ուշ՝ և առաւօտուն ալ ամենէն կանուխ անոնք գտնուեցան : Դամանակը ո՛չ անոր բարիքը պակսեցուց , ո՛չ հաստատութիւնը խախտեց , և ո՛չ ալ բնաւորութիւնը փոխեց :

ալ՝ ՚ի հարկէ հաւատալէն յառաջ եկած էր .
 և ինքնին յայտնի չէ որ՝ իր վարձու-նքը ապա-
 հով չէր կրնար ըլլալ, քանի որ իր հա-տարը
 սխալ էր : Եւ ինչպէս որ աս սկզբունքը աշ-
 խարհային բաներու մէջ միօրինակ ստոյգ
 կ'եղէ, անանկ ալ նմանապէս կրօնականի մէջ :
 Սէկը չկրնար ուղիղ վարձու-նք ունենալ, որ
 նախ և առաջ ուղիղ հա-տար չունի : Եւ մէն
 ճշմարիտ բարոյականութիւն՝ ճշմարիտ հա-
 ւատքի վրայ հիմնուած ըլլալու է . և ամէն ու-
 ղիղ վարձու-նք՝ ուղիղ հաւատքի վրայ : Բնաւ
 մէկ գործողութիւն մը՝ Լստուածոյ ընդունելի,
 կամ մէկ լուսաւորեալ խղճմտանքի մը հաճե-
 լի չէ, որն որ ուղիղ սկզբունքէ յառաջ չգար :
 Սէկ գետ մը՝ իր ակէն բարձր չկրնար ելել .
 մէկ ջուր մը՝ վճիտ չկրնար ըլլալ, թէ որ յըս-
 տակ աղբուրէ մը չբղխի . մէկ գործք մըն ալ
 ուղիղ կամ աղէկ չկրնար ըլլալ, թէ որ ու-
 ղիղ սկզբունքներէն՝ այսինքն Սուրբ Գիրքին
 սորվեցուցածներէն չեղէր :

3. ՍԵՆՆԻ ճշմարտապէս պատասխանաբար-էնք՝ Բէ՛
 մեր ՀԵՒԵՏՒԻՆ, Ի՛ Բէ՛ մեր ՊԵՐՄՈՒՆԻՒՄ, համար
 հա-տարապէս : Եւ այս պարզ, ու ինքնին մակա-
 բերուելիք պատճառին համար որ՝ վարձու-նքը
 միշտ հաւատքին հետ կապացեալ է, և անկէ է
 ծագումը, ու իր հանգամանքն ալ անկէ կ'առ-
 նէ : Եւ երկուքը այնչափ անբաժանելի են մէկ
 մէկէ՝ որ ասօքնին պատասխանատու ենք, և չէ՛
 թէ վերջինին լսելը՝ այնքան իմաստակութիւն
 և անտեղի է, որչափ որ մէկու մը՝ իր գրացիին
 տունը վառօդով նետելուն պատճառը ինքն է
 ըսելը, ու պնդելը թէ՛ կրակ տալու համար ին-
 քը ձեռք դպուցած չըլլալուն, անոր պատաս-
 խանատու չէ : Եւ շխարհային գործառնու-
 թեանց մէջ աս կերպով կը դատենք բանը, և
 իրաւամբ ալ է ըրած դատաստաննիս : Ու թէ
 որ ան կորսուած նաւուն նաւապետը՝ իրեն ը-
 րած մահադատութիւն սխալմունքը, անհոգութենէ-մը
 և զանցառութեան պատճառով ըրած ըլլար ալ՝
 նոյնպէս պատասխանատու պիտի համարուէր
 այն սոսկալի կորստեանը համար, ինչպէս որ
 մէկ դեղագործ մը՝ սխալմամբ հաւատացած
 մէկ դեղին տեղը, հիւանդին թոյն տալովն ու ա-
 նոր մեռնելուն պատճառ ըլլալովը՝ ըրած յան-
 ցանքին համար ամբաստանուելով կը դատա-
 պարտուի : Եւ աս օրինակներուն մէջ ցուց-
 ուած սկզբունքներուն նման՝ մարդիկը կը մե-
 ղադրենք, մարդասէր՝ անկողմասէր՝ և նախա-

պաշարմունքներէ ազատ չըլլալուն համար, ու
 իրենց կարծիքներնու համար ալ այնքան սաս-
 տիկ յանցաւոր կը սեպենք զիրենք՝ որքան որ
 իրենց վարձու-նքն համար :

Բայց թէ որ աշխարհային հասարակ գոր-
 ծառնութեանց մէջ՝ հաւատքնու համար այս-
 չափ պատասխանատուութիւն ունինք, ուր որ
 շատ անգամ սխալմունքի մէջ իյնալու ենթա-
 կայ ենք՝ շատ աւելի պատասխանատուութիւն
 ունինք կրօնական բաներու մէջ, որուն մէջ
 սխալելու կարօտութիւն չկայ . ուր որ ճշմար-
 տութիւնը յայտնուած ըլլալուն՝ պարզ է ա-
 նիկայ գիտնալ «պարզ» . և այնչափ պարզ՝ որ
 «ան ճամբուն մէջ քայլող, ու յիմարները ան-
 դամ պիտի չմտորին» : Եւ այս . լե՛ 8 . և ուր որ՝
 Լստուած խոտացեր է լուսաւորել, ու սորվե-
 ցնել, և առաջնորդել բոլոր անոնք՝ որ իրմէն
 կը խնդրեն : Ու աս պատճառին համար է որ՝
 Լստուած չէ թէ միայն կը հրաւիրէ, բայց կը
 հրամայէ ալ որ հաւատանք . ու կը յանդիմանէ
 մեզ, հա-տարալնու համար . և կը սպառնայ մե-
 զի յաւիտենական մահուամբ պարթելու՝ մեր
 անհաւատութեանը համար . և կը հաստատէ աս
 ճշմարտութիւնը թէ՛ չոր տիրտը ընել կու տայ
 չհաւատալնիս : Ուրեմն դատողութիւնն ու
 ընդհանրապէս մարդոց վճիռն ու փորձառու-
 թիւնը՝ կը միանան Լստուածաշունչին հետ մէկ
 տեղ ըսելու, թէ մենք մեր հա-տարին համար պ-
 ատասխանաբար-էնք :

4. Որչափ կարեոր բան է միշտ մտնելու պար-
 ասար ըլլալը : Եւ դժբաղը նաւուն մէջ գտնուած
 ճամբորդները, շատ քիչ մտքերնուն անցու-
 ցած էին՝ որ իրենց վախճանը այնքան պիտի
 մօտ ըլլար, և իրենց հասնելու ակնկալութիւն
 ըրած՝ կարծեցեալ նաւահանգիստնին, միայն
 յաւիտենականութեան հասնել մը պիտի ըլ-
 լար : Եւ տակաւին մէկ բոպէի մը մէջ հոգեօց
 աշխարհքը կանչուեցան, և հոն մտան, իրենց
 Լստուածոյն և Դատաւորին ներկայութեանը՝
 գրեթէ առանց առաջուց իմանալու, կամ պատ-
 րաստուելու, ու ատեն ունենալու : Սահը՝ կըր-
 նայ ըլլալ որ ո՛վ ընթերցող անոնց եկածին
 պէս՝ չեղէ ալ անանկ շուտ չգայ . բայց միւս
 կողմանէ՝ չա՛մբելով՝ կ'նայ ըլլալ որ գայ ալ :
 Աղուան վրայ ապահովութիւն չունիս, և չես
 դիտեր թէ մէկ օր մը ինչ բան կրնայ յա-
 ուաջ բերել, ինչ և իցէ բոլոր աս ապագային
 անստուգութիւններուն մէջը, իմաստութեան

մէկ մասն ալ ան է որ՝ պատրաստ գտնուիս : Եւ
 Եստուծոյ նախախնամութեանն ու իր խօսքին
 մէջ տուած զգուշութիւնն ալ է աս որ՝ կ'իմ
 գոն պարտաւորիս : Եւ մէկ զի ձգէ քու
 մեղքերդ , ու ապաշխարէ . հիմա հաւատա
 Տէր Յիսուս Քրիստոսին . հիմա սկսէ հաւա
 տոյ և անկեղծ հնազանդութեան կեանք մը՝
 որ թէ ապրիս , ու թէ մեռնիս , ապահով ըլլաս :
 Եւ մանակ մի անցըներ կենաց աս մեծ գործին
 մէկէն ձեռք զարնիլու . ապա թէ ոչ՝ երբոր
 մահուան սահմանին վրայ կայնիս , ան ատենը
 աս խրատին հնազանդելուն ուշ ըլլալը պիտի
 հասկընաս . « ԲՈՒ ԵՍՈՒՆԵՕՒ ԴԻՄԵՒՈՒՆԵ
 ԼՈՒ ՊԵՏՐԵՍՈՒՆ » :

ԱՂՕԹՒԻՆ ՈՒԺԸ

Եստուծոյ ընդունելի աղօթք մատուցանելու
 ուժէն աւելի բարձր մէկ ուժի մը ընդունակ
 չէ մարդս . և աս ալ ամէն մէկ հաւատացեալին
 շնորհուած է՝ որչափ որ իր վիճակը ստորին կար
 գի ալ ըլլայ : Եսիկա՝ ոչ եկեղեցւոյ օժանդա
 կութեանը , ոչ ալ անոր պաշտօնէիցը , և ոչ ալ
 շատ ազդեցութիւն ունեցող մարդոց արուե
 լու սահմանեալ է : Եւ մէնէն աննշան Եստուծոյ
 զաւակն եղողը՝ որ և իցէ մէկու մը չափ , կարճ
 ճամբայ մը՝ ու բաց դուռ մը ունի Եստուծոյ
 շնորհաց աթոռին առջևը երթալու : Մէկը
 կարօտ չէ եկեղեցւոյ օժանդակութեանը սպա
 սելու . բուն իսկ ինքը ազատութիւն ունի ա
 ղօթքով Եստուծոյ մօտենալու : Մէկը կարօտ
 չէ աւելի տարւօք , ու աւելի պատուաւոր մէկու
 մը առաջ անցներուն սպասելու : Եւ մէն հաւա
 տացեալ՝ մարդոց առջև որչափ տկար ու ան
 զօր կ'ըլլայ թող ըլլայ , իշխանի մը չափ
 ուժ կրնայ ունենալ Եստուծոյ առջև : Եւ
 կարելի է որ իրմէն տանապատիկ աւելի ար
 տաքին արտօնութիւններ ունեցողներէն աւելի՝
 Քրիստոսի համար , ու մարդոց փրկութեանը
 համար գործ կրնայ տեսնել : Եստուած՝ ինք
 ղինքը ու բոլոր իր զօրութիւնները պատրաստ
 կը պահէ , երբոր հաւատքով աղօթք կ'ըլլայ
 իրեն՝ ու կ'ըսէ . « Իմ որդւոցս համար ու իմ
 ձեռացս գործքերուն համար ինծի պատուէր
 տուէք » : (Եւայ . խն . 11 :) Թող անձանթ մէկ
 մարդ մը ըլլաս դուն , ու Սիօնի որդւոցը մէջ
 աննշան վիճակ մ'ալ ունեցած ըլլաս , քու
 աղօթքներդ սրտէդ ու շրթունքէդ ելած չելած՝

անմիջապէս անոնք առաջ կ'երթան , չէ թէ քու
 անունովդ՝ բայց ամէն մարդոցմէն աւելի ծա
 նուցեալ՝ եկեղեցւոյ Գլխոյն , ամէնէն զօրաւոր
 Միջնորդ ու Բարխիստին անունովդ : Քու սրբ
 տէգ ելելուն պէս՝ անմիջապէս անոնք կ'առ
 նուին , ու իրը եղածի պէս կ'ըլլան , ու իրեն
 կը մատուցուին : Եւ մէնէն տկար քրիստոնեան՝
 հոս մէկ յաջող տեղ մը ունի , որմէ մէկ ուժ
 մը կ'ստանայ աշխարհքը շարժելու : Կրնայ
 երթալ ու իր սիրտը՝ խիստ ջերմեռանդ փա
 փաքանօք անանկ մէկուն բանալ , որ կրնայ չա
 փէ դուրս առատութեամբ՝ մեր ուղածէն կամ
 կրցածէն շատ վեր բաներ ընել : Մենք մէկ
 Մեծ Քահանայապետ մը ունինք , որ մեզի
 համար երկինքը ելած է՝ Յիսուս Քրիստոս
 Երգարը , որուն արդարութիւնովը մենք հա
 մարձակութեամբ կրնանք դալ շնորհաց աթո
 ռին առջևը ու օգնութիւն գտնել պէտք է
 զած ատենը :

ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳԸ

Քանի որ հալածմունքը ջրհեղեղին ջուրի
 բուն պէս աշխարհիս վրայ կը մնայ , մենք ալ
 ան ատենը տապանին մէջ կը մնանք . բայց
 երբոր ջուրերը քաշուին ու երկիրը ցամախ
 մինչև անգամ աղանին թափառական կեանք
 մը վարել կ'ուզէ , ու բնաւ իր ապահովու
 թեան տունը չդառնալու փորձ կը փորձէ :

Հատերը կան որ չեն կրնար երկար ատեն
 յաջողութեան մէջ մնալ . ասիկա ճիշդ արե
 ուն լոյսին կը նմանի՝ որ յերաւի ըստ ինքեան
 լուսափայլ է , բայց տկար աչքերուն կը մնա
 սէ , անոնց գործարանքին յարմար չըլլալուն
 համար :

Քանի որ մենք՝ ներութեան , կարօտու
 թեան , երկիւղի և հիւանդութեան , կամ որ և
 իցէ գէշ փորձութիւններու մէջ ենք , մեր
 հաւատքը պայծառ կը փայլի : Բայց երբ որ
 Եստուած կ'ողորմի մեզի իր քաղցրութեամբ ,
 ու մեզ մահուան դուռէն կ'ազատէ , ու անանկ
 ապահով տեղ մը կը տանի մեզ որ յաջողու
 թեան հաղորդ ըլլանք՝ ան ատենը մութը կը
 մնանք , ու չենք կրնար ջերմեռանդ քրիստոն
 եայ ըլլալ , ու լուսոյ մէջ մնալ՝ բայց եթէ
 ներութիւններ ունեցած ատեննիս :

ԱՌԱՏԱԶԵՌՆ ԵԿԵՂԵՑԻ ՄԸ

Սանտուկի կղզիներէն մէկը՝ որ Վոլոքայի Վրսուի, տասն ու ութը տարի առաջ իր բնակիչները, անանկ հեթանոսական կեանք մը կ'անցընէին՝ որ Միացեալ Մասնազէն ան տեղերը քննելու համար դացող պաշտօնատարները կը ցուցնեն թէ, մարդկային ազգին որ և իցէ մէկ մասը այն աստիճան նուստ կացութեան մը մէջ բնաւ գտնուած չէ: Ոչ քաղաքակրթութիւն ունէին, և ոչ ալ դրակա նութիւն. հազիւ թէ խիստ վար տեսակ հաշնելիք և ուրիշ ստացուածք ունէին, և ոչոր մէկ խրճիթներու մէջ կը բնակէին. բայց աս իրենց ստորին աստիճանի վիճակին մէջ ալ, ուրիշ մարդոց չափ դէշ ու զօրաւոր կիրքեր ունէին:

Հետեւեալ տարին, 1835 ին, իրենց հիմակուան հոն գտնուած Վերիդացի քարոզիչը իր բնակութիւնը ասոնց մէջ հաստատեց, ու Մստուած շատ օրհնեց իր աշխատութիւնը. և դիւսաւորապէս իր միջոցով մէկ մեծ փոփոխութիւն մը եղաւ, որն որ շատ անգամ չպատահիր մարդու՝ որ աս կերպով անձամբ ականատես ըլլայ: Հատ կողմանէ նշանաւոր բաներ կան՝ որ այս փոփոխութիւնը կրնան ցուցնել. բայց անոնցմէ եկեղեցոյ առատաձեռնութենէն զատ, մէկն ալ այնչափ աւելի բացայայտ ցոյց չտար: Բանի մը տարի քարոզչաց ընկերութեան գանձին վճարածնին՝ իրենց քարոզիչին ծախքին բաւական ըլլալիքէն աւելի էր: Տարի մը առաջ 15,000 ղուրուշէն աւելի վճարեցին անոր սարուստին համար, և ամսագլխու ժողովքներէն 21,000 ղուրուշի չափ հանգանակեցին, և 6,000 ղուրուշի մօտ ալ ուրիշ բաներու համար: Հետեւեալ տարուան սկիզբէն մինչև մարտի 20 որ երեք ամիսէն պակաս կ'ընէ՝ ամսագլխու ժողովքներէն 6,000 ղուրուշէն աւելի հաւաքեցին, ու 54,000 ալ ստորադրուեցան իրենց ժողովարանին նորոգութեանը համար՝ բայց ի իրենց հովիւնուն տղին համար վճարած 3,000 ղուրուշէն, որուն Վերիդայ խրկուելու՝ և կրթութեանը համար ըլլալու բոլոր ծախքը վճարել խոստացան:

Բայց աս չէ՛ ամէնը. կղզիին մակերևոյթը խորտուբորա ըլլալուն՝ դահապէժ լեռներուն մէջ տեղերը անդին ասդին ձորեր ըլլալով, քա-

նի քանի հատ աղօթատուններ պէտք էին իրենց դիւրութեանը համար: Ըս ձորերուն մէկին մէջի բնակիչները՝ ընդ առէնը 250 հոգիէն աւելի չեն, որոնք աղօթատեղի մը շինելու վրայ են, որն որ իրենց քար, փայտ, կիր, աւաղ, և՛ բերելու աշխատութիւններէն զատ՝ 27,000 ղուրուշէն պակասի չըլլար: Բայց տակաւին նոյն տարւոյն առջի երեք ամսուան ամսագլխու ժողովքներուն մէջ 1,500 ղուրուշ հաւաքեցին, իրենց հովիւնուն ամսականին տալու բաժիննին վճարեցին, ու իրենց աղքատներուն համար ալ ողորմութիւն տուին: Հետուն եղած մէկ ուրիշ ձորի մը մէջ ալ՝ ուր որ հարկը հոգիէն քիչ աւելի բնակիչ կայ, գեղեցիկ ժողովարան մը շինեցին՝ ու Եւրոպական նստարան դրած են մէջը, և հիմա ստակ կը ժողվին որ զանգակ մը առնեն: Ուրիշ դաշտի մը մէջ եղած ժողովարան մը՝ աղէկ շինուած չէր, ու բնակիչները ստակ կը ժողվէին, որ մէկ նոր մը շինեն՝ որոշելով որ միւսը դպրոց ընեն: Ըս ա՛ մէն բաներէն զատ՝ մէկ մէկու մօտ աղօթատեղիներ շինելու վրայ են, որ ան տեղուանքը ժողվուին աղօթքի և ժողովակներ ընելու՝ իրենց բնակարաններնին աս տեսակ բաներու յարմար չըլլալուն համար: Եկեղեցոյ անդամները իրենց կամօքը արդէն աս տեսակ ութը հատ տուն շինեցին, որոնք կեդրոնական ժողովարանէն հազիւ երեք մղոն հեռաւորութիւն ունին: Ըհա հիմա տեսանք մէկ եկեղեցի մը՝ որուն հիմնարկութիւնը 20 տարիի չափ առաջ եղած էր հեթանոսութեան մէջ, և անոր ալ խիստ մէկ խաւար ու ցած տեղը: Խաւարը՝ Եւստարանին բերած լոյսին առջևէն շուտով փախաւ, և իրենց առջի ցած վիճակնին՝ միայն պատմական բան մը պիտի ըլլայ քիչ ատենէն ետև: Ըս եկեղեցին շատ նախապատրաստութիւններ կ'ընէ իր հոգևոր պիտոյիցը՝ համար, ու առատաձեռնութեամբ ուրիշներուն իր օգնութիւնը կը խրկէ՝ աղէկ դիտնալով անոր ինչ յարգ ունենալը: Խորհրդածութեան արժանի մէկ օրինակ մըն է ասիկա: Ըս եկեղեցիները՝ որ առանց հովիւի են մնացած հիմա, կարծելով թէ չեն կրնար անոնց ծախքը հոգալ, կամ առանց մէկ աղօթատեղի մը խորհելով թէ մէկ հատ մը շինելու կարողութիւննին չտանիր, թէ որ աս նոյն հոգին տեղիցը ըլլար իրենց մէջ՝ շուտով պիտի հովիւ և աղօթատեղի ունենային: Արջափ շուտով Ըս

ւետարանը բոլոր աշխարհքի տալու միջոցը պիտի պատրաստուէր, թէ որ ամէն եկեղեցի նոյն առատաձեռնութեան հոգին ունենար: Եւ ո՞վ կրնայ ըսել թէ՛ աս եկեղեցւոյն բռնած ընթացքը, հանդերձեալ աշխարհին մէջ մէկ ամենամեծ երջանկութիւն մը չպիտի տայ:

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐՈՒՆ ՎՐԱՅՈՎ ԻՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Մտտուած գիտէ որ իր խօսքը՝ լսողներուն վրայ խորին և զօրաւոր տպաւորութիւն ընելու յարմար է: Եւ այս տեսակ տպաւորութիւններ իրօք կ'ընէ, երբոր ջերմեռանդ սրտով ունկնդրութիւն մը ըլլայ անոր: Բայց ճշմարտութիւնը լող ու համոզուողներէն շատերը, ընդդիմութիւն կ'ընեն և իրենց մտքերը՝ շնորհաց վարդապետութիւններուն վրայով սաստիկ կուռ մը մէջ պաշարուած են: Իրենց միտքը զարմացման ու սարսափի մէջ կ'արթննայ՝ ինքզինքնին տեսնելով, ինչպէս որ աս վարդապետութիւնները կը ցուցնեն, որ իրենք սրբոցուցած Մտտուծոյ մը ձեռքն են: Ճշմարտութիւն է որ իր լոյսը իրենց մտքերուն վրայ ծագեց: Կը տեսնեն որ ճշմարտութիւնը ան է: Բայց կ'ուզեն որ իրենց աջքին առջևէն մէկ դի ընեն, կամ իր ուժը ունայնացնեն ճուռ հետեւութիւններ յարելով անոր վրայ:

Բայց մէկ բան մը կայ՝ որ աս վեճակին մէջ դանուած մտքերը պէտք է որ չմոռնան և աս է որ մէկ անմահ մտքի մը վրայ անգամ մը ճշմարտութեան ըրած տպաւորութիւնը, անմահ պիտի ըլլայ: Ընգամ մը հասկցուած ճշմարտութիւնը կրնայ ըլլալ որ մոռցուի, կամ ատեն մը ստութեան յարելով մէկ դի ձգուի, բայց բնաւ երբեք բնաջինջ չկրնար ըլլար: Մտութիւնը կրնայ ճշմարտութիւնով ջնջուիլ, բայց ճշմարտութիւնը բնաւ չըջնջուի կամ մշտնջենաւորապէս մտքէն դուրս չկրնար ձգուիլ: Մէկ ատեն մը կրնայ մտքին մէջ մտացածին խաբէութիւնները տեղի ունենալ: Բայց ուշ կամ շուտ մտքին ընդունած սխալ տպաւորութիւնները կը փարա-

տին, և Մտտուծոյ խօսքէն հեղ մը մտքին մէջ ընդունուած ճշմարիտ տպաւորութիւնները կը նորոգուին, ու յաւիտենական տրտաւորութիւն կ'առնեն:

Ընանկ որ եթէ հիմա Մետարանին ճշմարտութեանը հակառակող միտք մը՝ համոզուած ըլլալով որ անոնք ճշմարտութիւն են, և ուզէ որ անոնց վրայով համոզուած ըլլալը ծածկէ. պէտք է որ իմանայ թէ արդէն իր մտքին վրայ Մտտուծոյ խօսքին տրտաւորութիւնը եղած է, որ բնաւ չկրնար ջնջուիլ: Մտտուծոյ ճշմարտութիւնները որ երբեմն տեսաւ, միշտ ճշմարտութիւն կը մնան: Ու քանի որ միտքը իր յիշողութիւնը ու խիղճը ունի՝ ճշմարտութեան հիմնական յարաբերութիւնները կան ու կը մնան: Ինչ որ անգամ մը իմացաւ թէ ճշմարիտ են Մտտուծոյ նկատմամբ, բուն իսկ իր յանցանքներն ու դատապարտութիւնը, միայն Մտտուծոյ շնորհացը վրայ իր կախում ունեցած ըլլալը, բաց ՚ի քանի մը ժամանակաւոր ու վաղանցիկ մոլորութեան ամպերը մէկդի հանելով, պիտի տեսնէ որ միշտ ճշմարիտ են: Մէկ ճշմարտութիւնը մեր մոռնալը, անկիա սուտ չկրնար ընել, չկրնար անանկ ընել որ մեզի իրօք սուտ ըլլայ: Մտտուծոյ և յաւիտենականութեան նկատմամբ՝ որ և իցէ ատեն մեր մտքին վրայ եղած ճշմարիտ տպաւորութիւնը, յաւիտեան մեզի հետ մնալու սահմանուած է: Կրնայ ըլլալ որ մենք անկիա ծածկենք, կրնայ ըլլալ որ մոռնանք: Բայց ուշ կամ շուտ մեզի կը դառնայ կրկին բոլոր իր ուժովը:

Ուրեմն որ և իցէ մէկ մը՝ թէ որ կը տեսնէ թէ իր սիրտը Մետարանին մէկ վարդապետութեանը հետ հաշտուած չէ, պէտք է գիտնալ որ ան վարդապետութիւնը անանկ մէկ ճշմարտութիւն մըն է որ՝ յաւիտեան իրեն հետ պիտի մնայ: Ինչ որ անգամ մը Մտտուածային ճշմարտութեանը վրայ համոզելով ընդունեցաւ, իր էութեանը մէկ յաւիտենական տարրը պիտի ըլլայ: Թէ որ հիմայ անոնք ցաւոց մէկ պատճառ մըն են, ալ աւելի ան ատենը պիտի ըլլայ՝ որ յաւիտենական լուսովը ստիպուի տեսնելու: Ինքզինքնուն հրաժարելու են աս նեղութեան պատճառը վերցընելու կարող ըլլալէն առաջ:

Ուրեմն ճշմարտութեանը համոզուելով գէմ կեցողին բնաւ փախուստի ճամբայ մը չկայ : Աստուծոյ հետ հաշտուելը բարձրակապէս հարկաւոր բան մըն է : Ղըշմարտութեան համոզումը անանկ մէկ կրակ մը բռնկցուցած է իր հոգւոյն մէջ, որ բընաւ մարելիք չունի : Աստուծոյ հետ հաշտուելը ճշմարտութեան հետ ալ պիտի հաշտեցնէ, ու իր համոզումը ուրախութեան տարր պիտի ըլլայ իրեն . առանց ասոր՝ առնոց հետ հակառակելուն հետևութիւնը, իրեն հետ բերած բոլոր տագնապներովը մէկ տեղ յաւիտենական պիտի ըլլան :

ՄԵԿԶՄԵԿՈՒ ՕԳՆԵՑԵՔ

Այլեան լեռներէն անցնող ճանապարհորդ մը՝ բարձր լեռան մը վրայ ձիւնի փոթորիկէ մը բռնուեցաւ : Օգը թանձր էր, ու ձիւնախառն կ'անձրևէր, և հովին սասակութիւնը կարծես թէ մինչև իր ուկորներուն մէջ կը բանէր : Բայց ճանապարհորդը ատեն մ'ալ տաժանելի ջանքով մը յառաջ կ'երթար : Վերջապէս իր անդամները ցրտէն թմրած՝ ծանր քուն մը վրան գալ սկսաւ . ոտքը դրեթէ յառաջ չէր ուզեր շարժիլ, ու ձիւնին վրայ պառկեցաւ ան մահառիթ քունին տեղի տալու համար՝ որ խիստ ցուրտէն պաղածներուն վերջին վիճակն է, և որմէ անգամ մըն ալ աս աշխարհիս մէջ յերաւի արթննալիք չունէր :

Ղիշ պն րոպէին տեսաւ որ ճամբուն վրայէն ուրիշ խեղճ ճամբորդ մըն ալ կու գայ : Ան ապերջանիկ մարդը՝ իրմէն աւելի գէշ վիճակի մը մէջ ըլլալ կ'երևար, թէ որ կարելի է այսպէս ըսել, քանզի ան ալ հազիւ թէ կրնար շարժիլ . բոլոր իր զօրութիւնները թմրած էր, ու ամէն բան կ'երևար թէ մահուան կէտը հասած է :

Երբոր աս խեղճ մարդը տեսաւ ան ճամբորդը՝ որ ձիւնին վրայ պառկելու վրայ էր, մեծ ջանք մը ըրաւ : Ինքզինքը վեր վերցուց ու սողալով գնաց՝ որովհետև հազիւ թէ կրնար քալել, մեռնելու վրայ եղող՝ իրեն դժբաղդութեանը հաղորդ ընկերին : Անոր ձեռները իր ձեռացը մէջն առաւ

տաքցնելու համար . քունքերը, ոտքերը, ու բոլոր մարմինն ալ շփեց տաքցնելու համար : Աս միջոցիս մէջ շարունակ զուարթալից խօսքեր ականջն 'ի վար կը խօսէր, զանիկայ քաջալերելու համար :

Աս բաներն ընելով՝ մեռնելու մարդը կենդանութիւն առնել սկսաւ . իր զօրութիւնը վրան եկաւ, ու ճամբայ ելլելու կարողութիւն ունենալը զգաց : Բայց ասիկէ 'ի զտ ուրիշ օգուտ մը կար, աս չէր ամէնը . վասն զի իր մարդասէր բարերարը ևս՝ աս իր բարեկամը ազատելու համար ըրած ջանքերովը վրայ եկաւ : Հիելու ջանք ընելը, իր մարմնոյն մէջ ալ արեան շրջան ընելու միջոց եղաւ : Ինքք բանի որ միւսը տաքցնելու կ'աշխատէր, ինքն ալ կը տաքնար : Իր թմրութիւնը մէկդի գնաց, ալ չուզեց անիկ ետև քնանալ, իր անդամները կրկին իրենց ուժն առին, ու երկու ճամբորդներն ալ իրենց ճամբանին գացին միատեղ՝ կրջանկութեամբ և մէկզմէկ շնորհաւորելով, աս վտանգէն ազատելուն համար :

Հուտով ձիւնին փոթորիկը անցաւ, ու իրենք լեռն անցան, և իրենց տուններին ապահովութեամբ հասան :

Հիմա՝ ո՞վ ընթերցող, թէ որ քու սիրտդ պաղ է դէպ 'ի առ Աստուած՝ ու հոգիդ կորստեան վիճակին մօտ, ջանք ըրէ որ ուրիշ հոգւոյ մը անանկ օգնութիւն մը ընես՝ որ զինքը կենդանացնէ, ու իր սիրտը ուրախանայ . և շատ անգամ պիտի տեսնես որ՝ քու կինդ տաքցնելու, ազատելու, և ուրախացնելու ամենէն աղէկ միջոցն է ասիկա :

ԵՒ ԱՆԿԵ ԵՏԵՒ Ի՞ՆՉ

Պարոնին մէկը կառքը հեծած ըլլալով քաղաքի մը մօտ՝ աղէկ հագուած երիտասարդի մը հասաւ, և անիկա իր կառքին մէջ հրամցուց :

« Եւ ի՞նչ են (ըսաւ պարոնը՝ աս իրեն չճանցած պատանիին), քու դիտաւորութիւններդ ապագային վրայով » :

« Ես դրադիր մըն եմ » պատասխանեց երիտասարդը, « և իմ յոյսս աս է որ յաջողութիւն պիտի գտնամ, և ինքիւր գլխուս դորձի սկսիմ » :

“Եւ անկէ ետե ի՞նչ” հարցուց պարոնը :

“Ի՞նչ պիտի ընեմ . միտքս՝ ամուսնանալ , ու առանձին իմ գլխուս ընտանիք մը ունեւնալ է” ըսաւ երիտասարդը :

“Եւ անկէ ետե ի՞նչ” հարցուց նորէն միւսը :

“Առեւտրութեանս մէջ շարունակել , և հարստութիւն գիղել” :

“Եւ անկէ ետե ի՞նչ” .

“Ամենուն ալ բաժինը մեռնիլն է . ու տարակոյս չկայ որ ես ալ անկէ չպիտի կրնամ ազատիլ” , պատասխանեց երիտասարդը :

“Եւ անկէ ետե ի՞նչ” անգամ մըն ալ հարցուց պարոնը . բայց երիտասարդը՝ ասոր տալու պատասխան մը չունէր . ինքը՝ աս ներկայ կեանքէն անդին անցնող դիտաւորութիւն մը կամ նպատակ մը չունէր :

Քանի քանի երիտասարդներ կան ճիշդ աս վիճակին մէջ : Անոնց նպատակները՝ միայն աս ներկայ կեանքին կը վերաբերին , և ինչ որ գալու աշխարհին կը վերաբերի՝ բնաւ իրենց դիտաւորութեանց մէջ տեղ չունի :

ԱՌՈՎՁՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԵՆԵՐ

Տղաքը՝ պէտք է սորվեցընել , որ չէ թէ միայն աջ ձեռուընին՝ այլ նաև ձախն ալ գործածելու վարժին :

Հասարակ հացը՝ թէ որ մաքուր և անուշ ըլլայ , ճերմակէն աւելի աղէկ է արդոց համար :

Տղաքը՝ պէտք է որ զատ անկողինի մէջ պառկին , ու գիշերուան գտակ չդնեն գլուխնին : Եօթը տարուէն վար տղաքը՝ վեց եօթը ժամէն աւելի տան մէջ պահուելու չեն , և ան միջոցին ալ քանի մը անգամ հանդստանալու պարագ ստեններ տրուելու է :

Պէտք է որ տղաքն ու պատանիները՝ նստած , կայնած , ու քայլած ատեննին՝ գլուխնին վեր բռնեն . ուսերնին ալ դէպ ՚ի կոնակնին՝ ու չէ թէ առջևնին ծած բըռնեն : Տղոց համար ամենէն աղէկ անկողինը՝ մաղէ շինուածն է . և կամ ձմեռնալ մաղէ ու բամպակէ խառն եղածն է : Տղաքը՝ քիչէն քիչը , սունէն դուրս բաց օդին մէջ երկու ժամ քայլելու են :

Օրիորդները՝ թող տալու չէ որ կուրծքերնին ամուր կապեն : Աս սովորութիւնը՝ ընդհանրապէս թոքախտութիւն , և երբեմն ալ խելագարութիւն կը պատճառէ՝ որոնք շատ անգամ մահուամբ կը վերջանան :

Ամէն մարդիկ՝ թէ մեծ թէ պզտիկ , բոլոր մարմիննին պաղ ջուրով լուալու են ամէն առտու : Որչափ աւելի լաթ հագնինք վրանիս՝ ուրիշ պարագաները միօրինակ պահելով , այնչափ ալ քիչ ուտելիքի կարօտ կ'ըլլանք :

Հարիւր յիսուսէն երկու հարիւր տըրեմի չափ հաստատուն սննդարար ուտելիքը , հասարակ դործի մէջ եղող մարդու մը բաւական է : Աստղական կեանք անցընող մարդիկը՝ կերակուրնուն մէկ երրորդ մասը ձգելու են . և ասանկով անմարտութենէ կ'ազատին :

Պատանիներն ու ուրիշներն ալ , ճրագի լոյսով չեն կրնար ուսման պարագայի՝ առանց անոր պատիժը կրելու . գիշերը ճըրագի լուսով տկարացած աչքին ամենէն աղէկ ճարը՝ պաղ ջուրով շատ անգամ լուան է :

ՄՏՔԻ ԽՌՈՎՁՈՒԹԻՒՆ

Իէշ լուրը սրտին գործողութիւնը կը տկարացնէ . թոքը կը ճնշէ , ախորժակը կ'աւրէ , մարտողութիւնը կը դադրեցնէ , ու ըստ մասին բոլոր կաղմուածքին կենսական գործաւորութիւնը կախ կը թողու : Ամենալու պէս՝ այլայլութիւնը երեսը կը զարնէ , ու դէմքը կը շառագունի . երկիւղը՝ երեսին գոյնը մոխրի կը դարձընէ , ուրախութիւնը՝ գոյն կու տայ ու կը փայլեցնէ երեսը . և անմիջական դող ելլալը՝ միջոցաւոր ջիղերուն ելեքտրական ցնցում մը կը պատճառէ : Գարմանքը՝ բազկին զարկերը , վաղն ՚ի վաղը նետելու կը փութացնէ : Խելագարութիւնը՝ մեծ զգրութիւն մը կ'ազդէ : Ամբը կը հրամայէ , ու հարիւրաւոր ջիղերը հրամանը կատարելու կ'ելլեն : Մտքի զօրաւոր ամբոխում մը՝ շատ անգամ մէկէն ՚ի մէկ կը սպաննէ մարմինը : Կիտն , Գիտգորոն , ու Սովոկղը ուրախութիւններնուն մեռան՝ Յունական

խաղուց հանդէսին մէջ : Յաղթուելուն լուրը՝ Փիլիպպոս և Թադաւորը մեռուց : Ընչակաւոր ատենախօսները՝ շատ անգամ պատու տուելով ճարտարախօսութիւն ըրած տեղերնին , կամ ան աստիկ ամփոխմունքը պատճառ ող մտաց յուզմունքը մէկէն՝ ի մէկ դադրած ատենը , մեռած են : Վակրէյով Գաղղիացի երիտասարդը՝ իր հետամուտ եղած երաժշտական մրցանակին , ուրիշին տրուելու լուրը առածին պէս մեռաւ : Ես իրողութիւններէն ո՛րչափ յայտնի կ'եղևայ թէ՛ մեր առողջութեանը համար մասնաւորապէս , մեծ ինսուք տանելու եմք միտքերնիս հանգարտ պահելու :

ՀԱՏԵԿԻՒ ՄԸ՝ ՊԱՏԱՀԱՅՈՒՆԵՐԸ

Քանի մը տարի առաջ՝ Ռուսաց կայսրը մէկ ընծայ մը խրկեց Չինու կայսեր , որ մէկ հազուադիւտ հայելի մըն էր՝ գեղեցիկ և ծանրագին ըլլալուն կողմանէ : Կայսեր կամքը ան էր որ՝ ձեռքի վրայ տանին ճամբան Բեթրպուրկէն մինչև Փէքին : Ես գործքին անտանելի դժուարութեանը վրայ , քիչ շատ դաղափար մը կ'ունենան՝ ան ճամբաներուն հանգամանացը վրայով տեղեկութիւն ունեցողները : Բայց Ինքնակալին կամքն այս էր . ու հայելին անվնաս Չինաստանի Փէքին մայրաքաղաքը հասաւ : Ես միջոցին մէջ՝ դժտուութիւն մը ծագեցաւ Ռուսիոյ և Չինու Արքունեաց մէջը , ու Չինու կայսրը՝ ոչ անոր ընծան , ու ոչ ալ գեսպանը ընդունեց . ուստի սուրհանգակ մը խրկուեցաւ Բեթրպուրկ՝ կայսեր հարցընելու համար , թէ ինչ ընեն հայելին : Պատասխանը աս է որ՝ հայելին կրկին Բեթրպուրկ դարձնեն : Միքայէլ՝ Ռուսիոյ Մեծ Գուբար , որ աս հրամանը տրուած ատենը ներկայ էր՝ կատակի մը կերպով գրաւ (պէս) դրաւ կայսեր հետ , թէ հայելին ետ դարձուցած ատեննին պիտի կոտրի : Կայսրն ալ աս դրած գրաւին գէմ բռնեց . և հրաման ըրաւ սուրհանգակին , որ եթէ հայելին փորձանք մը հանդիպի՝ վերակացուին պատիժ սպառնայ . ու թէ որ անվնաս իրեն հասնի՝ մեծ վարձք խոստանայ : Վերջապէս իր հրամանացը համեմատ՝ տասն

ու չորս մարդով անվնաս բերին հայելին Բեթրպուրկ Իսահակի ըսուած հրապարակը հասուցին , ու կայսրը՝ որ պալատին պատուհաններուն առջևի ճեմելիքը կայնած էր իր եղբորը հետ , ինքզինքը շնորհաւորելով կը խնդար դրաւ վաստրկելուն համար : Բայց հայելին տանողներէն մէկը՝ Իվըր ըսուած պալատին սանդղակներէն վեր ելելու ատեննին ոտքը սխալ աստիճանի մը վրայ գնելով , իր ինկած ատենը ուրիշ տանողներուն մէկն ալ իր հետը վար ձգեց : Հայելին ինկաւ , ու հազարաւոր կտոր եղաւ , և ասանկով Մեծ Գուբար շահեցաւ գրաւը :

ՄԵԾ՝ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Ենտրա քաղաքը՝ հասարակօրէն բոլոր աշխարհի մայրաքաղաքը ճանչցուած է . և իր տարածութեանը՝ շեղութեանն ու հարտութեանը կողմանէ , այս անունին իրաւամբ արժանի է : Ենդղիացիք՝ իրենց մայրաքաղաքին վրայօք իրաւունք ունին պարծենալու , և այս բանիս վրայ ուրախանալու , որ քաղաքին սահմանին մէջ գտնուած Ժողովուրդը՝ աշխարհիս մէջ եղած քաղաքներուն հետ բաղդատելով , իրօք ամենէն բազմամարդ՝ և ամենէն ալ հարուստն է : Եմենէին չենք կրնար ըսել , թէ իրենց պարծանքը ունայն է . բանզի պաշտօնական ճիշդ յայտարարութիւններուն հաշիւներն ալ աս նոյն բանը կը հաստատեն : Ենդի գրութիւններէն կը տեղեկանանք որ՝ Ենտրայի բովանդակ Ժողովուրդը 2,300,000 է . և 300,000 էն աւելի տուն կայ մէջը՝ որոնց տարեկան վարձքը դրեթէ 9 միլիօն լիրայի չափ կը հաշուի : Ենդ ու լայն 15 հազար փողոց , հրապարակ , պողոտայ , ճեմելիք ճանապարհ և՛ կան՝ որոնք երկայնութիւնը Ենդղիական 18 մղոն , ու լայնութիւնը 7 մղոն տեղ կը տարածի : Թամիզ գետին վրայ 8 կամուրջ կայ : Զուր մատակարարելու համար հաստատուած 8 ընկերութիւն , 8 հատ երկաթի ճամբաներ ու կայանքներ՝ որոնք շեղ և բազմաձախ շինուածքներ են . գերեզմանոցի 7 ընկերութիւն , 6 հատ հասարակաց ճեմելիքներ՝ որոնք տարօրինակ ընդարձակութիւն ունին . 340 կպիսկապոսական եկեղեցի

ու մատուռ , և 370 ևս ուրիշ եկեղեցիներ • 250 հասարակաց դպրոց , 550 կառավարութեան պաշտօնատուներ , 14 բանտ , 8 ոստիկանութեան պաշտօնատուներ , 22 թէատրոն , 50 վաճառատեղի՝ ուտիլիթի վերաբերեալ բաներու համար • 400 իջևան , 6,000 դիմատուներ և զանազան խմելիքի խանութներ , ու 3,000 սրճարան : 16,510 կօշիկակար և ուրիշ ոտնաման շինող կան , 14,560 դերձակ , 13,210 ատաղձագործ , 6,830 որմնագիր , 2,320 կապարագործ , 5,040 տան ներկարար , 2,670 գլխարկ շինող , դուլպայ և՛ ծախող • 2,640 Ժամագործ , 1,180 հանդերձի նալաճառ , 1,090 դեղագործ , 2,140 տակառագործ , 4,000 դրաշար և՛ 1,000 անիւ շինող , 2,200 մազ կտրող , 1,000 խմորեղէն շինող , 4,400 մնագործ , 1,600 պանիր ծախող , 1,100 ձուկ ծախող , 1,100 ծխախոտ ծախող , 2,170 կառք շինող , 6,000 հացագործ , 5,000 խանութպան նպարավաճառ , 4,200 չուխայ ծախող , 1,500 կաթավաճառ , 2,900 ակնագործ , ոսկերիչ և՛ , ու 9,700 զանազան տեսակ հասարակաց կառք վարող : Իր բնակիչները՝ տարին 190,000 եղև միս կ'ուտեն , 776,000 ոչխար , 250,000 գառն 250,000 որթ , 300,000 խոզ , 2,160,000 կենդինար ձուկ , 120,000,000 գրիւ ցորեն՝ (դուրսէն եկած անբաւ աղիւրէն զատ •) 25 միլիօն Տօխայ կաթ , 65 հազար տակառ դիմի , 5 միլիօն Տօխայ զանազան ոգելից խմելքներ , 2 միլիօն տակառ գարեջուր , և 54 միլիօն կենդինար հանքային ածուխ կը սպարեն : Ես տեսակ հաշիւները՝ աւելի պարզապէս կը ցուցնեն ազգի մը հարստութիւնն ու ղեղխութիւնը , քան թէ « փորագրեալ գարդարուն արձանները » , կամ « ոսկիով քանդակեալ » յարկերը :

ՕՐԱԳՐԱՑ ՎՐԱՅ

ՏԵՂԵԿ ՈՒԹՒՒՆՆԵՐ

Միացեալ Նահանգք : Հաշիւ եղած է որ՝ Միացեալ Նահանգաց մէջ հրատարակուած այլ և այլ օրական լրագիրները , 250 ի չափ կ'ելեն • և շաբաթը երեք և երկու անգամինները , ու շաբաթականները 2,500 ի չափ • և աս օրագիրներուն մէջ կան ու

մանք՝ որ 20,000—60,000 ստորագրուողներ ունին • և ամսական թերթերէն մէկը՝ մինչև 200,000 էն աւելի ստորագրուողներ ունի :

Միացեալ Նահանգաց մէջ հրատարակուած լրագիրներուն բոլոր գումարը՝ աս չափազանց թիւը կ'ըլլայ • 412,880,000 :

Մեծն Բրիտանիա : Մեծին Բրիտանիայի մէջ , 600 ի չափ լրագիր կը հրատարակուի : Ետնցմէ 160ը՝ 1 օնտրա քաղաքին մէջ , 232ը Լնդոնի զանազան գաւառներուն մէջ գտնուած քաղաքները , և 211ը Սկոտլանդիայի ու Իրլանտայի մէջ :

Ռուսաստան : Հիմա Ռուսաստանի մէջ հրատարակուած լրագիրներուն՝ և շաբաթական , երկու շաբաթական ու ամսական և՛ թերթերուն բոլոր գումարը , 154 է • ասոնցմէ 65ը՝ Բեթրպուրկի մէջ կը հրատարակուի , 12ը Մոսքուայի մէջ , 5ը Օտեսա , 22ը Պալթիական գաւառներուն մէջ , ու 50ն ալ՝ կայսերութեան մնացած մասերուն մէջ : Ես 154ին 108ը՝ Ռուսերէն է , 29ը Գերմաներէն , 8ը Գաղղիարէն , 5ը Լեհաց լեզուով , 3ը Իսպաներէն և 1ը Իտալերէն :

Պեճիս : Օրական , շաբաթական և ամսական լրագիրներուն թիւը , որ հիմա այս տէրութեան մէջ կը հրատարակուին՝ 180 հատ են :

Բրիտանիա : Բրուսիոյ պաշտօնական տրւ պագրութեան մը գրածին նայելով , թէ՛ քաղաքական և թէ՛ ուրիշ կերպ՝ 809 զանազան տեսակ լրագիր կը հրատարակուի եղեր նոյն տէրութեան մէջ :

Կը ցաւիմք որ՝ Ֆրանսայի ու Գերմանիայի լրագրաց վրայ ստոյգ տեղեկութիւն հրատարակուած չըլլալով , չեմք կրնար ճիշդ հաշիւը տալ ան տեղերուն վրայօք : Վերոգրեալ հաշիւներէն հետեւեալ գումարները կ'արտադրին :

Միացեալ Նահանգները 2,750 , Մեծն Բրիտանիա 603 , Ռուսիա 154 , Պեճիս քա 180 , Բրուսիա 809 , որոնց բոլորին գումարը կ'ընէ 4,496 :

Միացեալ Նահանգաց մէջ ներկայ բազմամարդութիւնը 25,000,000 զնելով՝ այր և կին և տղաքն ալ մէկտեղ հաշուելով , մարդ զուրխ տարին 19 լրագիր կ'ելնայ : Մեծին Բրիտանիայի մէջ՝ 12,000 հոգւոյ

օրագիր մը կ'էյնայ : Պեճիքայի մէջ՝ 25,000 հոգւոյ : Ռուսիա գրեթէ 1,000,000 մարդոց 3 լրագիր : Բրուսիա 20,186 մարդու 1 լրագիր :

ՊՏՏՐԱՍ ՊԱՏԱՍԻԱՆ ՄԸ

Օր մը՝ Մեծն Ֆրեաներիկոսին ըսաւ զինուորին մէկը՝ տեղապահի պատուոյ աստիճան օր խնդրելու աղերսագիրը ներկայացնելով . «Տէր մէկ խօսք մը» . «Թիւ որ երկուք ըսես» պատասխանեց թագաւորը . «քեզ կախել կուտամ» . «Ստորագրէ» պատասխանեց զինուորը : Թագաւորը զարմանալով անոր մտքին արթնութեանն ու անշփոթութեանը վրայ , անմիջապէս շնորհեց եր խնդիրը :

1 լրագիրները օրէ օր աւելնալու վրայ են : Կը տեսնեմք որ Չինաստան անգամ, Փէրի՝ Մօնթիթօյ անունով նոր լրագիր մը կը հրատարակուի՝ իրենց լեզուովը . ու ասիկայ՝ ան տերութեան մէջ առաջին անգամ տպուածն է :

ՅԱՆԿ ՆՈՐԱՏԻՊ ԳՐՈՅ

Մետեւալ Նորատիպ Գիրքերը կը գտնուին Բրթէսթանդից Պօլսոյ Գրքատունը , և այս Տէրութեան ուրիշ գլխաւոր քաղաքներուն մէջ գտնուած Բրթէսթանդից Գրքատունները :

Ետուածաշունչ	Եշխարհաբառ	Միահատոր	Հասարակ կազմով	դո-րո-ւ	40
			Փառաւոր	"	60
			Ոսկեզօծ	"	100
Ղառ	Սրաին	պահպանութեանը վրայ	Թղթակազմ	"	3
			Կաշեով	"	5
Պարբ	Հելուետացի	Բարեկարգչին	Օրւինկի	"	1 : 20
Կարևոր	Հարցումներ	և Սուրբ Գրքէն	բերուած վկայութիւններով	"	20
			Պատասխաններ	"	20
Ենձնաքննութիւն	Կամ Քննէ	ինքզինքդ	Թէ արդեօք Քրիստոնեայ ես	"	1
Գլուխ	եկեղեցւոյ	Երկրորդ	տպագրութիւն	"	1
Իւրաքանչիւր	Եւլահան	Ի պատէթիստէ	ուսումնի վէ մախսուսիյէ	ճէմիյէթլէրտէ	3
		օգունմագ	իջիւն :	"	3

Սօտերս պատրաստ ըլլալու գրեանքը

- Նոր կտակարան Գրաբառ
- Քրիստիանոսին Ղամբորդութիւնը . Նորոգ սրբագրութեամբ վերստին տպուած և նոր պատկերներով զարդարուած :
- Փէյղամպէրլէրին էօմրիւնիւն նագլիյէթի :
- Իլմի ըագամ քիւչիւք մէքթէպ չօճուգլարը իջիւն :

Հտեմարանին Տարեկան գինը 18 զուրուշ կանխիկ , կամ ամէն մէկ ամսական տեսարակին գինը 60 փարայ է :

Դո-րո-րը երկու-երեք փոսպայն ծախքը աւանդէն վրայ է : Փօսպայն ծախքը խնայել ու-ղղները կրնան Տաճկաստանէ որ և էջէ Բողաքները եղած Բրօ-Բէսթանդ գրքատաներուն Գրքէն :